



# Հովհաննես Թումանյան

## Վայր ընկնող աստղեր

(Նմանություն)

Ճայրի՞կ, տե՛ս, տե՛ս, աստղը քոավ,  
Անհետ կորավ երկընքից,  
Ո՞վ էր արդյոք, որ զրկվեցավ  
Կես գիշերին իր կյանքից:

Ո՞հ, իմ դստրիկ, հանգիստ եղիր,  
Մի հոգևոր հայր էր նա,  
Գիշեր-ցերեկ մի հոգս ուներ,  
Որ մեզանից փող ստանա:

Փարիսական իր գործերով

Աշխարհ խաքեց, զրպվեցրուց,  
Այդ պատճառավ աստված նրա  
Աստղի լույսը խավարցուց:

Նա ամեն բան ծախեց փողով,  
Ոտքեց ամեն սըրբություն...

Այժմ այնտեղ ահ ու դողով  
Հաշիվ կըտա աստրծուն:

Հայրի'կ, տե՛ս, տե՛ս, մեկն Էլ ընկավ,  
Եվ չըռողեց ոչ մի գիծ,  
Ասա, հայրիկ, Էլ ո՞վ հանգավ

Ու պակասեց մեր կյանքից:

Ո՛հ, իմ դստրիկ, խաղաղ մնա  
Կեղծավորի մի աստղ Էր,  
Որ ձևացավ ամբողջ կյանքում  
Առաքինի, ազգասեր:

Ամեն անգամ նա խնջույքում  
Բախստ Էր մաղթում խեղճերին,  
Ազգի կենացն առաջարկում,  
Արտասուրը աչքերին:

Բայց խեղճերը նրա ձեռքից

Գիշեր-ցերեկ հալածված,  
Ազգին չեղավ նա կարեկից,  
Ոչ ազգ գիտեր, ոչ աստված:

Հայրի'կ, տե՛ս, տե՛ս, աստղը թռավ,  
Հետքից մի կարճ գիծ թռողեց,

Աստղը թռավ դեպի Բաքու,  
Էլ մյուս անգամ չերևեց:

Ո՛հ, իմ դստրիկ, հանգիստ եղիր,

Այն գործիչի մի աստղ էր,  
Որ իր սրտում ծնված օրից

Չուներ անկեղծ գործի սեր:

Նա աղմբկեց, անուն հանեց,  
Սանդուղք շինեց իր ազգին...  
Եվ ողջ ծաղրեց, երբ ապրում էր  
Գըրպանները լի ոսկին:

Հայրի'կ, տե՛ս, տե՛ս, մեկն Էլ ընկավ,  
Հետքից թողեց մի ծուռ գիծ,  
Ասա, հայրիկ, Էլ ո՞վ հանգավ,  
Ասողը պակսեց երկընքից:

Ո՛հ, իմ դստրիկ, մի՛ վրդովվիր,  
Մի խըմբագրի աստղ էր այն,  
Որ իր թերթը տըպագրում էր  
Անձի համար միմիայն:

1899